«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հետազոտող ուսուցիչ՝ Իսախանյան Նախշունիկ Արամայիսի

Լուկաշինի միջն. դպրոց ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝ Նատալյա Վարդանյան

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ.1 ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.1 Ուսուցիչների համագործակցության եզրերը սովորողների ծնողների հետ 5

1.2 Սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը դպրոցում վերջիններիս վարքի և առաջադիմության վրա 12

Եզրակացություններ և առաջարկություններ 15

Օգտագործված գրականության ցանկ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մենք ինքներս պետք է հավատանք այն ամենին, ինչ սովորեցնում ենք մեր երեխաներին» *Վուդրո Վիլսոն*

Սոցիալականացման գործընթացի հաջող ընթացքը մեծապես պայմանավորված է անձի վարքով, կարգապահությամբ, արժեքային համակարգով, ուստի սովորողների առաջադիմությունից զատ անչափ կարևոր է վերջիններիս՝ հասարակությունում դրսևորած վարքին ու կարգապահությանը: Վերոգրյալներով են պայմանավորված սովորողի ունեցած ընդունակությունների բացահայտումն ու զարգացումը և, իհարկե, կարողությունների, հմտությունների աստիճանական կատարելագործումը, այսինքն՝ լայն իմաստով նրա ուսումնական առաջադիմության արդյունավետությունը: Կարող ենք ասել, որ այս առումով դպրոցն ահռելի աշխատանք է տանում սովորողի հետ՝ բուն ուսումնական գործընթացի ընթացքում կերտելով նաև վերջինիս արժեհամակարգը: Այդուհանդերձ, այսօր սովորողների շրջանում բավականաչափ խնդրահարույց վարքային դրսևորումներ կարելի է նկատել, որոնք բացառելու համար, կարծում ենք, հարկավոր է, որուսուցիչ-աշակերտ անընդհատ կապից բացի ակտիվ ու կենսական լինի նաև ուսուցիչ-ծնող երկկողմանի մշտական փոխհամագործակցությունն և փոխվստահությունը:

Շատ կարևոր է, որ ուսումնական գործընթացում սովորողի հետ տարվի ճիշտ ու համակողմանի դաստիարակչական աշխատանք: Ուսուցիչն այստեղ իրավունքն չունի սխալվելու, ինչպես և ծնողը: Ուստի, երկուստեք մեկ նպատակի համար աշխատանք տանելով, մոտեցման արդյունավետ եղանակներ գտնելով՝ սովորողին կարելի է բերել կառավարելի դաշտ, ցույց տալ դասից ստացած գիտելիքների կարևորությունը:

Դաստիարակչական աշխատանքների հիմքում ընկած մարդասիրությունը, արդարությունը, հավասարակշռվածությունն ու աշխատասիրությունը և՛ սովորողներին պետք է մատուցել ոչ թե խոսքերով, այլ տեսանելի արդյունքով: Ուստի սովորողի ծնողը և ուսուցիչը նախ և առաջ պետք է ստեղծեն առողջ ու կառուցողական համագործակցային հարաբերություններ, որպեսզի աշխատանքի արդյունքը գոհացնի բոլոր կողմերին:

Իհարկե, կրթողի դաստիարակողի, ուղղորդողի, խրախուսողի դերը սովորողի առաջադիմության, մոտիվացիայի, աշխատունակության բարձրացման հարցում,

հիմնականում ուսուցչին է բաժին ընկել, սակայն ուսուցիչն ավելի արդյունավետ է առաջ շարժվում, երբ սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ ունի ընդհանուր նպատակ և նպատակին հասնելու համար անհրաժեշտ համագործակցություն:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հետազոտության արդիականությունությունը պայմանավորել ենք սովորողի ծնողի և ուսուցչի միջև կառուցողական հարաբերությունների անհրաժեշտությամբ, ինչը, կարծում ենք, իր դրական ազդեցությունն է բերում կրթադաստիարակչական գործընթացի անցնցում իրականացման վրա:

Հետազոտության խնդիրը Հետազոտության համար որպես խնդիր ենք սահմանել ծնող-ուսուցիչ համագործակցության՝ կրթության որակի վրա ունեցող բացառապես դրական ազդեցության կարևորումը:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է մատնանշել բոլոր այն եղանակներն ու միջոցները, որոնք թույլ կտան ամրապնդել դպրոց-ծնող համագործակցությունը՝ նպատակ ունենալով նպաստել սովորողի ուսումնառության որակի բարձրացմանը:

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.1 Ուսուցիչների համագործակցության եզրերը սովորողների ծնողների հետ

Երբ ծնողն ակտիվ կերպով ներգրավված է իր երեխայի կրթության գործընթացում, կարող ենք ասել, որ վերջինս ուսումնառության ընթացքում գրանցում է լավ արդյունքներ՝ առաջադիմության, կանոնավոր վարքի տեսանկյունից: Սա միանգամից է նկատելի, քանի որ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները, և նրա վարքը սկսում է համաչափորեն դառնալ օրինակելի, ընդ որում՝ թե' տանը, թե դպրոցում:

Ծնող-ուսուցիչ հաղորդակցությունը մեծ դեր է խաղում սովորողի կրթության որակի բարելավման համար, քանի որ ծնողներն ու ուսուցիչները հաղորդակցության ու համագործակցության ընթացքում միասին են սկսում հետազոտել սովորողի անձնային առանձնահատկությունները, ցանկություններն ու երազանքները, ինչը թույլ է տալիս վերջիններիս ավելի խորքային ճանաչել սովորողին ու հաշվի նստել նրա պահանջմունքների հետ: Ուսուցիչը սովորողի ընտանիքը ճանաչում է հենց նրա աչքերով, ավելին սովորողի վարքը հաճախ ուսուցչի ներկայությանմ կարող է տարբեր լինել, ուստի այս պարագայում մշտական կապը սովորողի ծնողի հետ թույլ կտա անուղղակի կերպով կառավարել սովորողին: Կարծում ենք այս մշտադիտարկումը շատ կարևոր է, որպեսզի համագործակցող կողմերը կարողանան վտահ լինել, որ սովորողը իրենց երկուսի հետ էլ ազնիվ է և որևէ զարտուղի ճանապարհ չի գտնի անթույլատրելի արարքներ գործելու համար: Այստեղ շատ կարևոր է կողմերի միջև անվերապահ վստայիությունը:

Ծնողի համար ուսուցչի ու դպրոցի հետ մշտական կապը շատ կարևոր է, քանի որ դա նրան թույլ է տալիս մշտապես տեղեկություն ստանալ իր երեխայի մասին՝ լինի դա ուսումնառության հետ կապված դժվարությունների, հասակակիցների հետ խնդիրների, վարքային շեղումների, թե կրթական ձեռքբերումների մասին:

Սովորողի բնականոն զարգացման ու դաստիարակության գաղափարն է միավորում ծնողներին և ուսուցիչներին, ուստի համագործակցությունը պետք է ուղղված լինի հենց այդ գաղափարի բնականոն ու արդյունավետ իրականացմանը: Ծնողների ներգրավվածությունը սովորողի դպրոցական կյանքին ոգևորիչ է նաև ուսուցչի համար, քանի որ դժվարությունների առաջացման ժամանակ, վերջինս կարող է հույս դնել ծնողական օգնության վրա: Ծնողի մասնակցությունը իր երեխայի

կրթությանը՝ նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին: Ծնողներն իրենց երեխաների ուսմնաության գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում են երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը : Ծնողների ներգրավվածությունը երեխայի դպրոցական կյանքին և ուսումնական գործընթացին իր մեջ ներառում է.

- դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն,
- երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում,
- դպրոցի համար խելամիտ ու հիմնավոր պահանջների նախանշում,
- ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և սովորողների առաջընթացի ու վարքային դրսևորումների քննարկում,
- տնային առաջադրանք կատարելիս սովորողին օգնության ցուցաբերում և ուղղորդում,
- ծնողական ժողովներին ակտիվ մասնակցություն
- գործունեություն ծնողական խորհրդում,
- այլ ծնողների հետ քաղաքավարի շփում, համագործակցություն:

Նման միջավայրի ապահովումը կարող է խթանել ուսուցիչի աշխատանքի արդյունավետությունը, քանի որ ծնողների հետ համատեղ ջանքերով կարելի է հասնել սովորողի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողունակությունների անցնցում ձևավորմանը: Սովորողին, ծնողներին և ուսուցիչներին պետք է միավորեն ընդհանուր մտահոգություններ, խնդիրներ, նպատակներ ու դրանց հասնելու լուծումներ, եղանակներ: «Սովորողի ծնողն իրավունք ունի համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով[1]»:

Շատ կարևոր է այն հանգամանքը , որ սովորողի դպրոցական կյանքի, ձեռքբերումների ու անկումների մասին տեղյակ լինի ոչ միայն մայրը: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խնամակալը: Ուստի կարող ենք ասել, որ համակարգային մոտեցումն այս պարագայում բավականաչափ արդյունավետ կարող է լինել սովորողին հնարավոր խնդիրներից զերծ պահելու համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի

[1] www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք, հոդված 28, կետ 2:

սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում:

Կրկին շետը դնենք այն հանգամանքի վրա, որ այն սովորողներրը, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում, ուստի կարող ենք ասել, որ այս գործընթացում ծնողական անտարբերությունը բասասաբար կարող է ազդել սովորողի կրթության որակի վրա, քանի որ անտարբերությունը ծնում է ամենաթողություն: Հաշվի առնենք, որ գոյություն ունի ուղիղ կապ երեխայի և ծնողի հուզական վիճակների միջև, ուստի երեխաների վիճակների արտահայտվածությունն ու ինտենսիվությունը կախված են նաև ծնողներից: Անգամ եթե ծնողները չեն խոսում իրենց զգացմունքներից կամ փորձում են թաքցնել դրանք, երեխաները զգում են իրենց շրջապատող լարվածությունը: Արդյունքում առաջանում է արատավոր, փակ շղթա: Ուստի հարկավոր է անմիջական ու բաց շփվել երեխայի հետ:

Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և սովորողների վրա: Ուսուցչի առջև ծառացած խնդիրն է երեխային դաստիարակելու հարցում ծնողների հետ փոխազդեցության և համաձայնության հասնել իրեն հասանելի բոլոր միջոցներով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ծնողների գիտակցված ընդգրկումը մանկավարժների հետ երեխայի դաստիարակության միասնական, համատեղ գործընթացում կարող է զգալիորեն բարձրացնել դրա արդյունավետությունը: Երեխայի զարգացման համար միասնական տարածքի ստեղծումն անհնար է, եթե ուսուցիչներն ու ծնողները մթության մեջ մնան միմյանց ծրագրերի և մտադրությունների մասին:

Կարևոր է նաև դասարանական ղեկավարի աշխատանքը սովորողների ծնողների հետ: Այդ աշխատանքի հիմնական բաղադրիչներից են.

- ծնողների հետ երեխաների դաստիարակության հարցերի քննարկում,
- դպրոցական կյանքին վերաբերող խնդիրների քննարկում,
- դաստիարակչական հարցերում որոշումների համատեղ կայացում,

- արտադասարանական աշխատանքներում ծնողների ներգրավվածության ապահովում[2]:

Կա մի հին դպրոցական աֆորիզմ. <<Երեխաների հետ աշխատելիս ամենադժվարը մեծերի հետ աշխատելն է>>: Շատ դժվար է դասղեկի համար շփվել ծնողների մեծ խմբի հետ ծնողական ժողովներին: Եվ հարց է ծագում. իսկ ընդհանրապես պե՞տք են այդպիսի ժողովները , թ՞ե դրանք կորցրել են իրենց արդիականությունը և անցկացվում են զուտ սովորույթի ուժով: Գաղտնիք չէ, որ դասղեկներից շատերը ծնողական ժաղովներին չեն պատրաստվում, ուղղակի հավաքում են ծնողներին հաշվետվություն տալիս իրենց երեխաների՝ արարքների, վարքի և հաջողությունների մասին:

Փորձենք հասկանալ թե ինչու է այնուամենայնիվ հարկավոր հավաքել ծնողներին: Առաջին հերթին հարկավոր է ստանալ այնպիսի տեղեկություններ որոնք անհրաժեշտ են երեխաների հետ աշխատելիս: Հայտնի է, որ ով գիտի կարևոր տեղեկություններ երեխաների մասին, նա էլ տիրապետում է դաստիրակչական իրավիճակին:

Դասղեկի համար այդպիսի տեղեկությունները նրա մասնագիտական հարստությունն են, որոշումներ ընդունելու հիմքը: Այդ առումով ցանկացած ժողովի համար անհրաժեշտ է նախապատրաստել ծնողներին տրվող հարցեր:

Օրինակ, ուսումնական տարվա սկզբին կարելի է առաջարկել մոտավորապես այսպիսի հարցաթերթիկ.

- հաճույքո՞վ է ձեր երեխան գնում դպրոց,
- ձեր երեխայի հիմնական մարդկային առավելությունները, նրա լավագույն գծերը և ունակությունները,
- ձեր երեխայի թերությունները, թուլությունները,
- ո՞ր առարկաներն է նա հետաքրքրությամբ ուսումնասիրում,
- ո՞ր առարկաները չի սիրում, անտեսում է,
- ձեր երեխան ունի՞ մշտական տնային պարտականություններ: Որո՞նք են,
- ձեր երեխան ի՞նչ ռեժիմով է ապրում տանը,
- ինչո՞վ է սիրում զբաղվել ձեր երեխան տանը ազատ ժամանակ:

Այս հարցերը պայմանական են, յուրաքանչյուր դասղեկին հետաքրքրում է իր շրջանակը: Իհարկե, ծնողների պատասխաններից չի կարելի սպասել լիովին անկեղծություն, բայց ցանկացած դեպքում դրանք կարևոր տեղեկություններ են և մտածելու տեղիք են տալիս:

Այսուհանդերձ, այս համագործակցության շրջանակներում հնարավոր են նաև կոնֆլիկտներ, անհամաձայնություններ, որոնք կարող են վնաս բերել բուն ուսումնական գործընթացին, մտցնել լարվածություն: Ուստի շատ կարևոր է երկուստեք պահպանել բարեվարքության կանոնները, լսել խնդիրն ու բերել հիմնավոր փաստարկներ, չառաջնորդվել բացառապես սեփական շահով:

Ծնողների հետ մշտական կապի մեջ լինելու, հնարավոր խնդիրները, դասարանում առկա կազմակերպչական հարցերը քննարկելու համար դասարանի ղեկավարը սահմանված կարգի համաձայն պետք է անցկացնի ծնողների հետ ընդհանրական հանդիպումներ՝ ծնողական ժողովներ: Սա այն հարթակն է, որտեղ թե' ուսուցիչը, թե սովորողի ծնողը՝ հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը, ունեն հնարավորություն ուղիղ հաղորդակցման: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, քննարկվում են սովորողների հնարավոր վարքային, կրթական և այլ բնույթի հարցերը: Ժողովի ժամանակ էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճն ու նպատակը: Ժողովի ընթացքն արձանագրվում է, ըստ անհրաժեշտության՝ կարելի է կազմակերպել արտահերթ ծնողական ժողովներ:

Ուսուցիչը նախ և առաջ ծնողի համար ներկայացնում է առկա խնդիրը կամ իրավիճակը, խոսում դրա հնարավոր դրական ու բացասական ենթատեքստի ու զարգացման հնարավոր սցենարների, հետևանքների մասին: Այստեղ կարևոր է ծնողական համայնքի արձագանքը՝ հետադարձ կապ ստեղծելու կարողությունը: Շատ կարևոր է, որ ծնողն ընդունի և' դրական և' բացասական կամ քննադատողական դիտարկումները: Շատ հաճախ՝ վերջին դիտարկումների պարագայում, ծնողները ցուցաբերում են անհավասարակշիռ ու պաշտպանողական վարքագիծ: Մինչդեռ, շատ կարևոր է արձանագրել խնդիրը, դնել այն քննարկման, որպեսզի դրան հետևի լուծումներ գտնելու հնարավոր հիմնախնդիրներն ու բացթողումները շտկելու փուլը: Կարևոր է, որ ծնողն այս պարագայում լինի հավասարակշռված, հասկանա խնդրի բուն էությունը, դրանից բխող հետևանքներն ու հնարավոր վտանգները:

Լարվածությունը, կոնֆլիկտների անկառավարելիությունը, անշուշտ, այս գործընթացում տեղ չունեն: Կողմերը երկուստեք պետք է գիտակցեն, որ քննարկումն

[2] https://escs.am/files/files/2021-02-08/c23df9485819d1e8030dcca275ff2d7d.pdf Ա. Պետրոսյան, «Դասղեկի աշխատանքի կազմակերպումը դպրոցում»:

ու բացասական կողմերի մատնանշումն ուղղված է ոչ թե իրենց իրավունքների կամ արժանապատվության ոտնահարմանը, այլև հիմնախնդրի բարձրաձայնմանն ու հնարավոր լուծումներ գտնելուն: Ծնողական ժողովների տեսակներն են.

- Կազմակերպչական
- Թեմատիկ
- Համադպրոցական
- Ամփոփիչ

Կարևոր է նաև ծնողական ժողովների ժամանակ մանկավարժական համակողմանի խորհրդատվությունները: Առանձին դեպքերում ուսուցիչը նպատակահարմար կարող է համարել ծնողի հետ անհատական զրույցը: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է անվերահսկելի ու պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքն ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը: Այստեղ մեծ անելիք ունի նաև դպրոցի հոգեբանը: Բերենք վերջինիս պաշտոնային պարտականություններից մի քանի օրինակ: Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը ուսումնական հաստատությունում աշխատանքներ է տանում սովորողների հոգեկան առողջության և անձի կայացման ու զարգացման ուղղությամբ, աջակցում է ուսումնական հաստատությունում բարենպաստ հոգեբանական մթնոլորտի և սովորողների զարգացման համար լիարժեք պայմանների ստեղծմանը, դիտարկում, բացահայտում և կանխում է անձի հոգեկան գործընթացների, վիճակների դժվարությունները և շեղումները, հոգեբանական խորհրդատվությամբ աջակցում է ծնողներին (կամ նրանց օրինական ներկայացուցիչներին), մանկավարժներին և կրթական գործընթացի այլ մասնակիցներին սովորողների զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերում, ինչպես նաև տալիս է անհրաժեշտ տեղեկատվություն երեխայի զարգացման համար լիարժեք պայմանների (այդ թվում՝ առանձնահատուկ) ստեղծման վերաբերյալ[3]:

Ծնողական ժողովների ժամանակ ուսուցիչը պետք է ունենա հստակ սահմանված օրակարգ, որի համաձայն պետք է անցկացնի այն: Ժողովն անցկացնելիս ուսուցիչը պետք է նկատի ունենա հետևյալ սկզբունքները.

- Ժողովը սկսեք բարձր տրամադրությամբ և ողջույնի խոսքով:

[3] https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ Կառավարության որոշում:

- Ծնողներին ներկայացրեք ժողովի օրակարգը:
- Խոսեք նախ դրական հարցերի մասին:
- Առանձին աշակերտների խնդիրները մի դարձրեք ընհանուր քննարկման թեմա: Աշակերտների բացասական կողմերը ներկայացնելիս եղեք նրբանկատ:
- Օրակարգի յուրաքանչյուր հարց քննարկելուց հետո անպայման լսեք ծնողների առաջարկությունները:
- Կատարեք ծնողների հաշվառում:
- Հետևեք ժամանակին. ժողովը չպետք է տևի մեկուկես ժամից ավելի:
- Ժողովն ավարտեք որևէ հետաքրքիր և ուրախալի տեղեկության հաղորդմամբ. հիշեք՝ յուրաքանչյուր ծնող ժողովից պետք է հեռանա լավ տրամադրությամբ, հաջորդ ժողովին անպայման մասնակցելու մեծագույն ցանկությամբ[4]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ այն սովորողները, ում ծնողներն ակտիվ են իրենց երեխայի դպրոցի և ուսումնառության հարցերում, կառուցողական են ուսուցիչների հետ համագործակցության ժամանակ, կարող են ունենալ ավելի շատ ձեռքբերումներ, որոնց շարքում են.

- սովորողը դրական է տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունի,
- ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ,
- ավելի լավ հարաբերություններ ունեն ուսուցիչների հետ վստահում ու հավատում են նրանց,
- ուսումնառության գործընթացին ավելի պատասխանատու են մոտենում,
- փորձում են պահել բարեվարքության կանոնները,
- կարգապահությանն ընդառաջ են գնում,
- դասարանական կոնֆլիկտերը շրջանցում են:

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները: Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողն ավելի է հասկանում սեփական երեխային՝ մեծ ուշադրություն հատկացնելով

[4] https://escs.am/files/files/2021-02-08/c23df9485819d1e8030dcca275ff2d7d.pdf Ա. Պետրոսյան, «Դասղեկի աշխատանքի կազմակերպումը դպրոցում»:

երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին: Ուսուցչի հետ համագործակցության արդյունքում ծնողը սկսում է վերանայել իր պահվածքն ու փորձում երեխայի հետ հարաբերություններում լինել ավելի հարմարվող ու հանդուրժող: Ծնողի համար այդ համագործակցության արդյունքում հասկանալի է դանում սեփական երեխայի պահանջմունքները, ցանկություններն ու երազանքները, քանի որ ուսուցչից ստացած տեղեկատվության հիմնական մասին նա չի տիրապետում: Այսպիսով այս համագործակցության շնորհիվ ծնողի համար նկատելի փոփոխություններից են.

- դառնում է ավելի հոգատար,
- սկսում է ավելի շատ գնահատել երեխայի ձեռքբերումները,
- առավել գրագետ մոտեցում է ցուցաբերում երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին,
- ավելի ինքնավստահ է որոշումներ կայացնելիս,
- սկսում է շատ ուշադրություն դարձնել սեփական գիտելիքների մակարդակի բարձրացմանը,
- երեխային տալիս է հնարավորություն՝ ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները,
- դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ,
- ամբողջապես տիրապետում է երեխայի վիճակի մասին տեղեկություններին,
- միջոցներ է ձեռք առնում երեխայի հիմնխնդիրները լուծելու նպատակով:

Այսպիսով, կարող ենք վերահաստատել այն պնդումը, որ ուսուցչի համագործակցումը սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողի կրթության կազմակերպան ու դաստիարակության մեջ ունի առանցքային նշանակություն :

1.2 Սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը դպրոցում վերջիններիս վարքի և առաջադիմության վրա

Ընտանիքը, որպես դաստիարակության միջավայր, նրա ազդեցությունն անձի դաստիարակության գործընթացի և արդյունքների վրա շատ կարևոր են երեխայի բնականոն զարգացման համար: Սա այն միջավայրն է, որտեղ ծնվում ու աշխարաճանաչողության սկզբնական քայլերն է անում մանուկը, պատանին դեռահասը, ուստի ծնողի, ընտանեկան միջավայրի ուղիղ ներգործությունը ողջ կյանքի վրա ունենում է մեծ ազդեցություն:

Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը (այսուհետ՝ Երեխայի լավագույն շահեր)[5]:

Կարևոր հանգամանք է երեխայի կարգավիճակը ընտանիքում: Այս հարցը նույնպես պետք է դնել ընտանիք-դպրոց համագործակցության ակունքում: Այս մասով իր կարևոր դերակատարում ունի ունի ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժը: Սոցիալական մանկավարժը, համագործակցելով բազմամասնագիտական խմբի մյուս մասնգետների հետ, ուսումնասիրում է սովորողների կյանքի պայմանները, ընտանիքի առանձնահատկությունները, ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը սովորողի վրա, նրանց սոցիալական միջավայրը, շփումները, հետաքրքրությունները, հաղորդակցման դժվարությունները, սոցիալական միջավայրում հարմարման և պաշտպանվածության մակարդակը, դուրս է բերում կարիքները և դրանց համապատասխան կազմում է միջամտության պլան, որը ներառում է կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումները, ժամկետները, պատասխանատուները[6]:

---

[5] https://www.arlis.am/documentview.aspx?docid=119102 ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 1, կետ 7:

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ Կառավարության որոշում:

Որպեսզի դաստիարակչական գործընթացն ընտանիքում անցնի արդյունավետ, հարկավոր է, ու ծնողներն առաջին հերթին բացառեն որևէ բռնություն, վատ կամ բացասական ներգործություն երեխայի վրա: Սա կարող է կազմաքանդել սովորողի բնականոն հոգեկան զարգացումն ու անդառնալի հետևանքներ ունենալ: Դաստիարակության գործում միշտ, այսօր առավելապես, կարևորվել է կարևորվել է երեխայի նկատմամբ ծնողի ճիշտ դրսևորումները: Ծնողական սերն ու հոգատարությունը կենսական անհրաժեշտություն են երեխայի գոյապահպանման համար: Հակառակ դեպքում մի կողմից անտարբերությունն ու եսասիրությունը, մյուս կողմից ծնողական սիրո բացակայությունը հանգեցնում են ատելության, արհամարանքի՝ ծանրացնելով թե' երեխայի, թե' ծնողի կյանքը[7]:

Այսօր դպրոցում լրջագույն խնդիրներ են առաջանու�՝ կապված ծնողների որոշ մասի ինքնադաստիարակության հարցերի հետ, ուստի սովորողների հետ ունեցած որոշակի դժվարությունների հիմնական դրդապատճառները կարելի է փնտրել հենց ծնողների մեջ: Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությունից է կախված մարդկային ամբողջ մեծ հասարակությունը: Կարգապահության լավագույն դպրոցը հենց ընտանիքն է, որի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է: Իսկ երեխաների դաստիարակության գլխավոր դպրոցը ծնողների փոխհարաբերություններն ու վերաբերմունքն է միմյանց նկատմամբ: Ուստի, ընտանեկան դաստիարակության շատ դժբախտությունների արմատները թաղված են հենց այնտեղ, ուր ծնողները երեխային մանկությունից չեն սովորեցրել ղեկավարել սեփական ցանկությունները, չեն սովորեցրել ճիշտ վերաբերվել մեծերին, բարեվարք պահել շրջապատում: Առանց ընտանեկան ճիշտ դաստիարակության դպրոցում սովորողին կառավարելն ու վերահսկելը անչափ դժվար է ուսուցչի համար: Այն ծնողներն են շահում, ովքեր երեխաների դաստիարակությունն իրականացնելիս ամեն ինչի չափը դարձնում են սովորույթ, բնավորության գիծ, ամենօրյա կանոն, ու դրանցով այնպես են առաջնորդվեւմ, ինչպես օրենքը հարգող դատավորը: Ծնողները դասղեկի, ուսուցիչների անմիջական օգնությանմբ պարտավոր են սիրո զգացմունքներ դաստիարակել[8]: Ծնողը պիտի ընկեր լինի իր երեխայի համար, հաճախակի զրուցի նրա հետ կյանքից, բարուց ու չարից, լավ ու վատից, հասարկությունից,

---

[7] http://www.ysu.am/files/1-1511355539-.pdf ՀՊՄՀ, «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում», Երևան, 2016, էջ 11;

[8] http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2005, էջ 391-392:

արժեքներից, հայրենիքից, ծնողից, տնից, հազար ու մի կարևոր մանրուքներից: Այս բոլորն էլ ի վերջո կկազմեն այն դաստիարակությունը, այն արժեքային համակարգը, որ ծնողը կփոխանցի իր երեխային:

Հաճախ ենք տրտունջներ լսում դասարանում սովորողների վարքից, կարգապահությունից: Իսկ ի՞նչ ակնկալիք կարելի է ունենալ նման սովորողներից, ովքեր դասերին հաճախում է հենց այնպես, առանց ուշադրության, առանց պատասխանատվության տարրական զգացումի, անտարբեր են դասարանի մաքրության, աշխատանքային սեղանի կոկիկության, գեղեցիկ ձեռագրի և այլ նմանատիպ կարևոր մանրուքների նկատմամբ: Ի՞նչ ակնկալել այն աշակերտից, որ դպրոց է գալիս զուտ ընկերներին տեսնելու, նրանց հետ չարաճճիություններ անելու և ուրախ ժամանակ անցկացնելու համար: Նման աշակերտին կարելի է փրկել միայն ճիշտ ու կանոնավոր դաստիարակությամբ, իսկ այստեղ կրկին կցանկանանք կարևորել ծնող-դպրոց կապը:

Այսպիսով, կարծում ենք, որ որևէ կերպ չի կարելի անտեսել ծնողին: Եթե վերջինս չի պատկերացնում սեփական երեխայի ուսումնական հարցերում իր կարևոր դերակատարումը, ապա հարկավոր է, որ ուսուցիչը սկսի հենց այդ կետից՝ ծնողին բերել համագործակցային դաշտ:

Ուսումնասիրելով սույն հետազոտության թեման՝ ձեռք բերեցինք ավելի խորքային գտելիքներ, որոնք, վստահաբար, կաջակցեն մեզ մեր հոտագա մանկավարժական գործունեության ընթացքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնվելով հետազոտության ընթացքում կատարած մեր պնդումների վրա՝ հանդես գանք մեր ընդհանրացնեղ դիտարկումներով.

- Ուսուցիչը շատ կարևոր դերակատարում ունի սովորողների կրթության ու դաստիարակության գործընթացում սովորողների ծնողների հետ կառուցողական ու բարենպաստ հարաբերություններ հաստատելու առումով:
- Ընտանիքի և դպրոցի փոխգործունեության ձևերը հնարավորություն են տալիս կողմերին առողջ բանակցային հարաբերություններ ստեղծել՝ ունենալով ընդհանուր նպատակներ ու մղումներ:
- Ուսուցիչի սերտ համագործակցությունը սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների հետ կարող է լուծել կրթական մի շարք հիմնախնդիրներ:
- Ուսուցիչը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայցուցիչը սովորողների կրթության ու դաստիարակության հարցում պետք է ունենան միասնական պահանջներ ու նպատակներ:
- Ուսուցիչը սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների համար պետք է ապահովի մանկավարժական-լուսավորչական խորհրդատվություն:
- Ուսուցիչն ու ծնողը պարտավոր են միմյանց տեղյակ պահել սովորողի խնդիրների մասին ու համատեղ փորձեն ելքեր գտնել:
- Ուսուցիչն ու սովորողի ծնողը պետք է փոխադարձաբար հարգեն միմյանց՝ հաշվի նստելով քաղաքավարության կանոնների ու էթիկայի նորմերի հետ:
- Ուսուցիչը պետք է իրականացնի ծնողական ժողովներ՝ նպատակ ունենալով քննարկել առկա խնդիրները:
- Մանկավարժական կոլեկտիվը ծնողների հետ համագործակցության հարցում պետք է միասնական մոտեցումներ ցուցաբերի՝ ի շահ սովորողի:
- Կարծում ենք, որ այս հարաբերություններում շատ կարևոր են մարդկային որակները, ուստի երկուստեք հարկավոր է լինել հանդուրժող և արդարամիտ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ Կառավարության որոշում:
2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=119102 ՀՀ ընտանեկան օրենսգիրք:
3. www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք:
4. https://escs.am/files/files/2021-02-08/c23df9485819d1e8030dcca275ff2d7d.pdf Ա. Պետրոսյան, «Դասղեկի աշխատանքի կազմակերպումը դպրոցում»:
5. http://www.ysu.am/files/1-1511355539-.pdf ՀՊՄՀ, «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում», Երևան, 2016:
6. http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2005: